



COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Եվրոպական պայմանագրերի շարք – N 132

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՅՈՒ
ԱՆԴՐՄԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ստրասբուրգ, մայիսի 5, 1989թ.

Տեքստը փոփոխվել է 2002 թվականի մարտի 1-ին ուժի մեջ մտած Արձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

Նախաբան

Մոյն Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները և Եվրոպական մշակութային կոնվենցիայի մասնակից մյուս պետությունները,

համարելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամ պետությունների միջև առավել մեծ միասնության հասնելն է՝ նրանց ընդհանուր ժառանգությունը հանդիսացող կատարելատիպերն ու սկզբունքները պահպանելու և իրականացնելու նպատակով,

համարելով, որ մարդու արժանապատվությունը և մարդկանց հավասարությունն այդ սկզբունքների հիմնարար տարրերն են,

համարելով, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածում ամրագրված արտահայտվելու և տեղեկատվության ազատությունը ժողովրդավարական հասարակության առանցքային սկզբունքներից է, ինչպես նաև այդ հասարակության առաջընթացի և յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական պայմաններից մեկը,

վերահաստատելով տեղեկատվության և գաղափարների ազատ հոսքի, ինչպես նաև հեռարձակողների անկախության սկզբունքներին իրենց հավաստարմությունը, որոնք համարվում են իրենց հեռարձակման քաղաքականության անբաժան հիմքը,

հաստատելով հեռարձակման կարևորությունը մշակույթի զարգացման, ինչպես նաև ժողովրդավարական բոլոր խմբերի ու քաղաքական կուսակցությունների միջև բազմակարծություն և հավասար հնարավորություններ ապահովող պայմաններում կարծիքների ազատ ձևավորման համար,

համոզված լինելով, որ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների շարունակական զարգացումը պետք է խթանի ցանկացած միջոցով տեղեկություններ ու գաղափարներ արտահայտելու, փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը՝ անկախ սահմաններից,

ցանկանալով հանրությանը տալ ծրագրերի ընտրության ընդլայնվող հնարավորություն՝ դրանով իսկ ամրապնդելով Եվրոպայի ժառանգությունը և զարգացնելով նրա տեսալսողական ստեղծագործությունը, ինչպես նաև հաստատական լինելով իրականացնել մշակութային այդ նպատակը բարձրորակ ծրագրերի արտադրության և շրջանառության աճին ուղղված ջանքերի միջոցով՝ դրանով իսկ բավարարելով բնակչության ակնկալիքները քաղաքական, կրթական և մշակութային ոլորտներում,

ընդունելով կարգավորման ընդհանուր լայն շրջանակները համախմբելու անհրաժեշտությունը,

հաշվի առնելով N 2 Բանաձևը և «Ձանգվածային լրատվության միջոցների վերաբերյալ քաղաքականության մասին» նախարարների մակարդակով Եվրոպական 1-ին համաժողովի հռչակագիրը,

ցանկանալով զարգացնել հեռուստատեսային գովազդին, լրատվամիջոցներում կանանց և տղամարդկանց հավասարությանը, հեռուստառադիոհեռարձակման համար արբանյակային կապի հնարավորությունների օգտագործմանը և Եվրոպայում տեսալսողական արտադրության խթանմանն առնչվող սկզբունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի գործող առաջարկություններում ամրագրված սկզբունքները,

համաձայնեցին հետևյալի մասին.

ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Առարկան և նպատակը

Սույն Կոնվենցիան վերաբերում է հեռարձակվող ծրագրերին: Կոնվենցիայի նպատակը Մասնակիցների միջև հեռուստածրագրերի անդրսահմանային հեռարձակումը և վերահեռարձակումը դյուրացնելն է:

Հոդված 2. Գործածվող հասկացությունները¹

Սույն Կոնվենցիայի նպատակներով՝

- ա. «Հեռարձակում» նշանակում է վերգետնյա հաղորդչի, կաբելային կամ ցանկացած տեսակի արբանյակային կապի միջոցով, կողավորված կամ չկողավորված ձևով, հեռուստածրագրերի սկզբնական տարածում՝ անսահմանափակ թվով անձանց կողմից ընդունման համար: Այն չի ներառում անհատական պատվերով իրականացվող հաղորդակցման ծառայությունները:
- բ. «Վերահեռարձակում» նշանակում է անսահմանափակ թվով անձանց կողմից ընդունման համար հեռարձակողների կողմից հեռարձակվող հեռուստածրագրերի կամ դրանց կարևոր մասերի ընդունման և դրանց ամբողջական ու անփոփոխ տեսքով միաժամանակյա հեռարձակման փաստը՝ անկախ կիրառվող տեխնիկական միջոցներից:
- գ. «Հեռարձակող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը խմբագրական պատասխանատվություն է կրում անսահմանափակ թվով անձանց կողմից ընդունման համար նախատեսված հեռուստածրագրերի ստեղծման համար և որը հեռարձակում է դրանք ինքնուրույն կամ երրորդ անձի միջոցով՝ ամբողջական և անփոփոխ կերպով:
- դ. «Ծրագիր» նշանակում է նախորդ պարբերության իմաստով տվյալ հեռարձակողի կողմից մեկ ծրագրում ընդգրկված բաղադրիչների ամբողջությունը:
- ե. «Եվրոպական տեսալսողական ստեղծագործություններ» նշանակում է ստեղծագործական աշխատանքներ, որոնց արտադրությունը կամ համատեղ արտադրությունը վերահսկվում է եվրոպական ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից:
- զ. «Գովազդ» նշանակում է վճարի կամ համանման այլ հանդիպական բավարարման դիմաց կամ ինքնագովազդի նպատակով ցանկացած հրապարակային հայտարարություն, որն ուղղված է ապրանքի կամ ծառայության վաճառքին, գնմանը կամ վարձակալությանը նպաստելուն, որևէ նպատակ կամ գաղափար առաջ մղելուն կամ գովազդատուի կամ հենց հեռարձակողի համար ցանկալի այլ ազդեցություն ապահովելուն:
- է. «Հեռուստաշուկա» նշանակում է հանրության համար հեռարձակվող անմիջական առաջարկներ՝ վճարի դիմաց ապրանքներ կամ ծառայություններ՝ ներառյալ անշարժ գույք տրամադրելու, իրավունքներ և պարտավորություններ ստեղծելու նպատակով:

¹ Տեքստը փոփոխվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

- ը. «Հովանավորություն» նշանակում է հեռարձակման գործունեությամբ կամ տեսալսողական ստեղծագործությունների արտադրությամբ չբաղվող ֆիզիկական կամ իրավաբանական անձի մասնակցությունը՝ տվյալ անձի անունը, ապրանքային նշանը, իմիջը կամ գործունեությունը գովազդելու նպատակով որևէ հաղորդման ուղղակի կամ անուղղակի ֆինանսավորման գործում:

Հոդված 3. Կիրառման ոլորտը

Սույն Կոնվենցիան կիրառվում է ցանկացած ծրագրի նկատմամբ, որը հեռարձակվում կամ վերահեռարձակվում է Մասնակիցների իրավագործության ներքո գտնվող կազմակերպության կողմից կամ տեխնիկական միջոցներով, անկախ այն հանգամանքից՝ դա իրականացվում է կաբելային կապի, վերգետնյա հաղորդչի կամ արբանյակային կապի միջոցով, և որը կարող է անմիջականորեն կամ միջոցորդավորված կերպով ընդունվել մեկ կամ մի քանի այլ Մասնակիցների տարածքում:

Հոդված 4. Ընդունման և վերահեռարձակման ազատությունը

Մասնակիցներն ապահովում են արտահայտվելու և տեղեկատվության ազատությունը՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն, ինչպես նաև երաշխավորում են ընդունման ազատությունը և չեն սահմանափակում սույն Կոնվենցիայի պայմաններին համապատասխանող ծրագրերի վերահեռարձակումն իրենց տարածքներում:

Հոդված 5. Հեռարձակող Մասնակիցների պարտականությունները²

1. Յուրաքանչյուր հեռարձակող Մասնակից ապահովում է իր իրավագործության ներքո գտնվող հեռարձակողների կողմից հեռարձակվող բոլոր ծրագրերի համապատասխանությունը սույն Կոնվենցիայի պայմաններին:
2. Սույն Կոնվենցիայի նպատակներով՝ Մասնակցի իրավագործության ներքո գտնվող հեռարձակողը
 - հեռարձակող է, որը 3-րդ պարբերության համաձայն համարվում է այդ Մասնակցի տարածքում գործունեություն իրականացնող.
 - հեռարձակող է, որի նկատմամբ կիրառվում է 4-րդ պարբերությունը:
3. Սույն Կոնվենցիայի նպատակով՝ հեռարձակողը Մասնակցի (այսուհետ՝ հեռարձակող Մասնակից) տարածքում գործունեություն իրականացնող է համարվում հետևյալ դեպքերում՝
 - ա. հեռարձակողի գլխավոր գրասենյակը գտնվում է Մասնակցի տարածքում, և ծրագրային քաղաքականության վերաբերյալ որոշումները կայացվում են այդ Մասնակցի տարածքում.
 - բ. եթե հեռարձակողի գլխավոր գրասենյակը գտնվում է Մասնակիցներից մեկի տարածքում, սակայն ծրագրային քաղաքականության վերաբերյալ որոշումները կայացվում են մեկ այլ Մասնակցի տարածքում, ապա հեռարձակողը համարվում է այն Մասնակցի տարածքում գործունեություն իրականացնող, որտեղ գործում է հեռուստահեռարձակման աշխատանքներում ներգրավված աշխատուժի զգալի մասը: Եթե հեռուստահեռարձակման աշխատանքներում ներգրավված աշխատուժի զգալի մասը գործում է այդ Մասնակիցների տարածքներից յուրաքանչյուրում, հեռարձակողը համարվում է այն Մասնակցի տարածքում գործունեություն

² Տեքստը փոփոխվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

իրականացնող, որտեղ գտնվում է իր գլխավոր գրասենյակը: Եթե հեռուստահեռարձակման աշխատանքներում ներգրավված աշխատուժի զգալի մասն այդ Մասնակիցներից ոչ մեկի տարածքում չի գործում, հեռարձակողը համարվում է այն Մասնակցի տարածքում գործունեություն իրականացնող, որտեղ առաջին անգամ սկսել է հեռարձակումը՝ այդ Մասնակցի իրավական համակարգի համաձայն՝ պայմանով, որ հեռարձակողն այդ Մասնակցի տնտեսության հետ պահպանում է կայուն և գործուն կապ:

- գ. եթե հեռարձակողի գլխավոր գրասենյակը գտնվում է Մասնակցի տարածքում, սակայն ծրագրային քաղաքականության վերաբերյալ որոշումները կայացվում են սույն Կոնվենցիայի Մասնակից չհանդիսացող պետությունում կամ ընդհակառակը, հեռարձակողը համարվում է տվյալ Մասնակցի տարածքում գործունեություն իրականացնող՝ պայմանով, որ հեռուստահեռարձակման աշխատանքներում ներգրավված աշխատուժի զգալի մասը գործում է այդ Մասնակցի տարածքում:
- դ. եթե Եվրոպական պառլամենտի և Խորհրդի՝ անդամ պետություններում օրենքով, կանոնակարգով կամ վարչարարությամբ սահմանված՝ հեռուստահեռարձակման աշխատանքների իրականացմանը վերաբերող որոշակի դրույթների համակարգման մասին Խորհրդի 89/552/ԵՏՀ հրահանգը փոփոխող 1997 թվականի հունիսի 19-ի 97/36/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 3-րդ պարբերության չափորոշիչները կիրառելիս հեռարձակողը համարվում է Եվրոպական համայնքի անդամ պետությունում գործունեություն իրականացնող, սակայն սույն Կոնվենցիայի նպատակներով այդ հեռարձակողը նույնպես համարվում է տվյալ պետությունում գործունեություն իրականացնող:
4. Հեռարձակողը, որի նկատմամբ չեն կիրառվում 3-րդ պարբերության դրույթները, Մասնակցի՝ այսպես կոչված հեռարձակող Մասնակցի իրավագրության ներքո գտնվող է համարվում հետևյալ դեպքերում՝
- ա. օգտագործում է այդ Մասնակցի կողմից տրամադրված հաճախականություն:
- բ. չնայած չի օգտագործում Մասնակցի կողմից տրամադրված հաճախականություն, սակայն օգտագործում է այդ Մասնակցին պատկանող արբանյակային կապի հնարավորությունները:
- գ. չնայած ո՛չ օգտագործում է Մասնակցի կողմից տրամադրված հաճախականություն, ո՛չ էլ Մասնակցին պատկանող արբանյակային կապի հնարավորությունները, սակայն օգտագործում է այդ Մասնակցի տարածքում տեղակայված՝ արբանյակային կապի երկրային կայանի միջոցով ափիլինք (up-link):
5. Եթե հեռարձակող Մասնակիցը չի կարող որոշվել 4-րդ պարբերության համաձայն, սակայն Մշտական կոմիտեն քննում է այդ հարցը սույն Կոնվենցիայի 21-րդ հոդվածի 1«ա» պարբերության համաձայն՝ այդ Մասնակցին որոշելու նպատակով:
6. Սույն Կոնվենցիան չի կիրառվում բացառապես սույն Կոնվենցիայի Մասնակից չհանդիսացող պետություններում ընդունման համար նախատեսված և մեկ կամ ավելի Մասնակիցների տարածքում հանրության կողմից անմիջականորեն կամ միջնորդավորված կերպով չընդունվող հեռուստահեռարձակումների նկատմամբ:

Հոդված 6. Տեղեկություններ տրամադրելը

1. Հեռարձակողի պարտականությունները հստակ և պատշաճ կերպով պետք է սահմանվեն յուրաքանչյուր Մասնակցի իրավասու մարմնի կողմից տրամադրված լիցենզիայում կամ վերջինիս հետ կնքած պայմանագրում, կամ որևէ այլ իրավական միջոցով:
2. Հարցման դեպքում հեռարձակողի մասին տեղեկությունները տրամադրվում են հեռարձակող Մասնակցի իրավասու մարմնի կողմից: Այդ տեղեկատվությունն առնվազն ներառում է հեռարձակողի անունը կամ անվանումը, նստավայրը և կարգավիճակը, օրինական ներկայացուցչի անունը, կապիտալի կազմը, հեռարձակողի կողմից հեռարձակվող կամ հեռարձակվելիք ծրագրերի ֆինանսավորման բնույթը, նպատակն ու եղանակը:

ԳԼՈՒԽ II. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդված 7. Հեռարձակողի պարտականությունները

1. Ծրագրերի բոլոր բաղադրիչներում, դրանց ներկայացման և բովանդակության առումով, պետք է հարգվեն մարդու արժանապատվությունը և այլոց հիմնարար իրավունքները:

Մասնավորապես՝

- ա. դրանք չպետք է լինեն անպարկեշտ և, մասնավորապես, պարունակեն պոռնկագրության տարրեր,
 - բ. դրանցում չպետք է անհարկի տեղ հատկացվի բռնությանը կամ հրահրվի ռասայական ատելություն:
2. Ծրագրերի այն բոլոր բաղադրիչները, որոնք կարող են երեխաների և անչափահասների ֆիզիկական, մտավոր կամ հոգեկան զարգացման վրա բացասական ազդեցություն ունենալ, չպետք է թողարկվեն, եթե, ելնելով հեռարձակման և ընդունման ժամերից, հավանականություն կա, որ երեխաներն ու անչափահասները կդիտեն դրանք:
 3. Հեռարձակողն ապահովում է, որպեսզի լրատվական հաղորդումներում փաստերն ու իրադարձությունները ներկայացվեն անաչառ կերպով և խթանվի կարծիքների ազատ ձևավորումը:

Հոդված 8. Պատասխանի իրավունք³

1. Յուրաքանչյուր հեռարձակող Մասնակից ապահովում է, որպեսզի յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, անկախ քաղաքացիությունից կամ բնակության վայրից, հնարավորություն ունենա օգտվելու պատասխանի իրավունքից կամ 5-րդ հոդվածի իմաստով իր իրավագործության ներքո գտնվող հեռարձակողի կողմից հեռարձակվող հաղորդումներին առնչվող իրավական կամ վարչական պաշտպանության այլ համեմատելի միջոցներից: Մասնավորապես, նա ապահովում է, որպեսզի պատասխանի իրավունքի իրականացման հետ կապված ժամկետներն ու մյուս պայմաններն այնպիսին լինեն, որ ապահովվի այդ իրավունքի արդյունավետ իրականացումը: Այդ իրավունքի կամ համեմատելի իրավական կամ վարչական պաշտպանության միջոցների արդյունավետ իրականացումն ապահովվում է թե՛ ժամկետների, թե՛ եղանակների առումով:

³ Տեքստը փոփոխվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

- 2. Այդ նպատակով՝ ծրագրի կամ դրա համար պատասխանատու հեռարձակողի անունը (անվանումը) պետք է համապատասխան միջոցներով պարբերաբար նշվի այդ ծրագրում:

Հոդված 9. Տեղեկությունների հանրամատչելիությունը¹

3-րդ հոդվածի իմաստով Մասնակցի իրավագործության ներքո գտնվող հեռարձակողի կողմից հեռարձակելու կամ վերահեռարձակելու բացառիկ իրավունքների իրականացման հետևանքով հանրության՝ տեղեկություններ ստանալու իրավունքի խախտումից խուսափելու նպատակով յուրաքանչյուր Մասնակից դիտարկում և, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկում է իրավական միջոցներ, ինչպես օրինակ՝ հանրության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող իրադարձությունների մասին համառոտ տեղեկատվություն ստանալու իրավունքի նախատեսումը:

Հոդված 9¹. Առանձնակի կարևորության իրադարձությունների հանրամատչելիությունը²

- 1. Յուրաքանչյուր Մասնակից պահպանում է այնպիսի միջոցներ ձեռնարկելու իրավունքը, որոնք ապահովում են, որպեսզի իր իրավագործության ներքո գտնվող հեռարձակողը բացառիկ հիմունքներով չհեռարձակի Մասնակցի կարծիքով հասարակության համար առանձնակի կարևորության իրադարձություններն այնպես, որ այդ Մասնակցի տարածքում հանրության զգալի զանգվածին զրկի այդ իրադարձությունների անվճար հեռուստատեսությամբ՝ ուղիղ հեռարձակմամբ կամ տեսաձայնագրությամբ հետևելու հնարավորությունից: Նման դեպքերում, տվյալ Մասնակիցը կարող է նախաձեռնել նախանշված իրադարձությունների ցանկի կազմումը, որոնք, Մասնակցի կարծիքով, հասարակության համար առանձնակի կարևորություն են ներկայացնում:
- 2. Մասնակիցները, ձեռնարկելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով, ինչպես նաև, համապատասխան դեպքերում, տվյալ երկրի սահմանադրությամբ նախատեսված իրավական երաշխիքների ապահովմանն ուղղված համապատասխան միջոցներ, ապահովում են, որպեսզի իրենց իրավագործության ներքո գտնվող հեռարձակողը Անդրսահմանային հեռուստատեսության մասին եվրոպական կոնվենցիան փոփոխող արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո գնված բացառիկ իրավունքները չիրականացնի այնպես, որ մեկ այլ Մասնակցի տարածքում հանրության զգալի զանգվածը զրկվի այդ Մասնակցի կողմից նախանշված իրադարձություններին անվճար հեռուստատեսությամբ՝ ամբողջական կամ մասնակի ուղիղ հեռարձակմամբ, կամ եթե դա թելադրված է հանրության շահերից բխող օբյեկտիվ պատճառներով կամ համապատասխանում է դրանց, ամբողջական կամ մասնակի տեսաձայնագրությամբ հետևելու հնարավորությունից՝ ինչպես սահմանված է այդ մյուս Մասնակցի կողմից 1-ին պարբերության համաձայն՝ պահպանելով հետևյալ պահանջները
 - ա. 1-ին պարբերությունում նշված իրավական միջոցները գործողության մեջ դնող Մասնակիցը կազմում է, իր կարծիքով, հասարակության համար առանձնակի կարևորություն ներկայացնող՝ տվյալ երկրում կամ դրանից դուրս կատարվող իրադարձությունների ցանկ.
 - բ. Մասնակիցն այդ միջոցներն իրականացնում է հստակ և թափանցիկ ձևով՝ պատշաճ և արդյունավետ ժամկետում.
 - գ. Մասնակիցը որոշում է, թե արդյոք իրականացվելու է իրադարձությունների ամբողջական կամ մասնակի ուղիղ հեռարձակում, թե, եթե դա թելադրված է հանրության շահերից բխող օբյեկտիվ պատճառներով կամ

² Գլուխը լրացվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

համապատասխանում է դրանց՝ ամբողջական կամ մասնակի տեսաձայնագրությամբ.

- դ. ցանկը կազմող Մասնակցի կողմից ձեռնարկվող միջոցները պետք է լինեն համաչափ և այնքան մանրամասն, որ մյուս Մասնակիցներին հնարավորություն տրվի ձեռնարկելու սույն պարբերությամբ նախատեսված միջոցները.
- ե. ցանկը կազմող Մասնակիցը ցանկի և համապատասխան իրավական միջոցների մասին ծանուցում է Մշտական կոմիտեին, որն էլ սահմանում է ծանուցման համար նախատեսված ժամկետը.
- զ. ցանկը կազմող Մասնակցի կողմից ձեռնարկվող միջոցները պետք է համապատասխանեն Մշտական կոմիտեի՝ 3-րդ պարբերությունում նշված ուղեցույցին, և Մշտական կոմիտեն պետք է այդ միջոցների վերաբերյալ ներկայացրած լինի իր դրական եզրակացությունը:

Սույն պարբերության վրա հիմնված միջոցները կիրառվում են բացառապես Մշտական կոմիտեի կողմից 3-րդ պարբերությունում նշված տարեկան ցանկում հրապարակված իրադարձությունների, ինչպես նաև փոփոխող Արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո գնված բացառիկ իրավունքների նկատմամբ:

3. Տարեկան կտրվածքով Մշտական կոմիտեն՝

- ա. հրապարակում է Մասնակիցների կողմից 2«ե» պարբերության համաձայն ծանուցված ցանկում ընդգրկված իրադարձությունների և համապատասխան իրավական միջոցների համախմբված ցանկը.
- բ. ի հավելումն 2«ա»-«ե» պարբերություններում թվարկված պահանջների՝ կազմում է ուղեցույց, որի ընդունման համար պահանջվում է անդամների ձայների երեք քառորդ մեծամասնությունը՝ սույն հոդվածի և Եվրոպական համայնքի համապատասխան դրույթների կիրառման միջև տարբերություններից խուսափելու նպատակով:

Հոդված 10. Մշակութային նպատակները¹

1. Յուրաքանչյուր հեռարձակող Մասնակից, հնարավորության դեպքում և համապատասխան միջոցների կիրառմամբ, ապահովում է, որպեսզի իր իրավագրության ներքո գտնվող հեռարձակողն իր եթերային ժամանակի մեծ մասը հատկացնի եվրոպական հաղորդումներին՝ չհաշված լրատվական հաղորդումներին, սպորտային իրադարձություններին, խաղերին, գովազդին, տելետեքստային ծառայություններին և հեռուստաշուկային հատկացվող ժամանակը: Հաշվի առնելով հեռարձակողի՝ իր լսարանին տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումներով ապահովելու պարտավորությունները՝ այս համամասնությունը պետք է ապահովվի աստիճանաբար՝ համապատասխան չափորոշիչների հիման վրա:
2. Նախորդ պարբերության կիրառման վերաբերյալ ընդունող Մասնակցի և հեռարձակող Մասնակցի միջև անհամաձայնության դեպքում, Մասնակիցներից մեկի պահանջով կարելի է դիմել Մշտական կոմիտեին, որպեսզի այն կազմի տվյալ հարցի վերաբերյալ իր խորհրդատվական եզրակացությունը: Նման անհամաձայնությունը ենթակա չէ 26-րդ հոդվածով նախատեսված արբիտրաժային կարգով քննության:

¹ Տեքստը փոփոխվել է Արձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

3. Մասնակիցները պարտավորվում են միասին փնտրել առավել նպատակահարմար միջոցներ և ընթացակարգեր՝ աջակցելու եվրոպական արտադրությանը և դրա զարգացմանը, մասնավորապես, տեսալսողական արտադրության փոքր հնարավորություններով երկրներում կամ այն երկրներում, որտեղ սահմանափակ տարածում ունեցող լեզուներ են գործածվում՝ բացառելով հեռարձակողների միջև խտրականությունը:
4. Մասնակիցներն ապահովում են, որպեսզի իրենց իրավագործության ներքո գտնվող հեռարձակողը իրավատերերի հետ համաձայնեցված ժամանակահատվածից դուրս չհեռարձակի կինեմատոգրաֆիական ստեղծագործություններ:

Հոդված 10¹. Բազմակարծությունը լրատվամիջոցներում¹

Սույն Կոնվենցիայի հիմքում ընկած համագործակցության և փոխօգնության ոգով՝ Մասնակիցները ձգտում են այնպես անել, որ իրենց իրավագործության ներքո գտնվող հեռարձակողի կամ ցանկացած այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից 3-րդ հոդվածի իմաստով հեռարձակվող կամ վերահեռարձակվող ծրագրերը չվտանգեն բազմակարծությունը լրատվամիջոցներում:

ԳԼՈՒԽ III. ԳՈՎԱԶԴԸ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏՈՒԿԱՆՆԵՐԸ

Հոդված 11. Ընդհանուր չափանիշները³

1. Գովազդը և հեռուստաշուկան պետք է լինեն բարեխիղճ և ազնիվ:
2. Գովազդը և հեռուստաշուկան չպետք է լինեն մոլորեցնող և չպետք է վնաս հասցնեն սպառողների շահերին:
3. Երեխաներին հասցեագրված և նրանց մասնակցությամբ գովազդում ու հեռուստաշուկայում պետք է խուսափել այն ամենից, ինչը կարող է վնաս հասցնել երեխաների շահերին, ինչպես նաև պետք է հաշվի առնել նրանց ներհատուկ դյուրահավատությունը:
4. Հեռուստաշուկայում պետք է բացառվի անչափահասներին ապրանքների և ծառայությունների առքուվաճառքի կամ վարձակալության պայմանագրերի կնքման մեջ ներքաշելը:
5. Գովազդատուն չպետք է հաղորդումների բովանդակության մասով որևէ խմբագրական միջամտություն կատարի:

Հոդված 12. Տևողությունը¹

1. Հեռուստաշուկայով ընդհատումների, գովազդային ընդհատումների և գովազդի այլ ձևերի, բացառությամբ 3-րդ պարբերության իմաստով հեռուստաշուկայի «պատուհաններ»-ի, ծավալը մեկ օրվա ընթացքում չպետք է գերազանցի ընդհանուր եթերաժամանակի 20 տոկոսը: Գովազդային ընդհատումների ծավալը մեկ օրվա ընթացքում չպետք է գերազանցի ընդհանուր եթերաժամանակի 15 տոկոսը:

¹ Հոդվածն ավելացվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:
² Վերնագիրը փոփոխվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:
³ Տեքստը փոփոխվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

2. Գովազդային ընդհատումների և հեռուստաշուկայով ընդհատումների ծավալը մեկ եթերային ժամվա ընթացքում չպետք է գերազանցի 20 տոկոսը:
3. Բացառապես հեռուստաշուկային չվերաբերող ծրագրերի ընթացքում հեռարձակվող՝ հեռուստաշուկային վերաբերող «պատուհաններ»-ի անընդմեջ տևողությունը պետք է կազմի առնվազն տասնհինգ րոպե: Մեկ օրվա ընթացքում «պատուհաններ»-ի առավելագույն թիվն ութն է: Մեկ օրվա ընթացքում դրանց ընդհանուր տևողությունը չպետք է գերազանցի երեք ժամը: Դրանք պետք է հստակ նշվեն տեսաշարային և ձայնային միջոցներով:
4. Սույն հոդվածի նպատակներով՝ գովազդը չի ներառում՝
 - հեռարձակողի կողմից արվող այն հայտարարությունները, որոնք վերաբերում են իր սեփական ծրագրերին և այդ ծրագրերին ուղղակիորեն վերաբերող լրացուցիչ արտադրանքին.
 - անվճար հեռարձակվող այն հայտարարությունները, որոնք վերաբերում են հանրության շահերին և ունեն բարեգործական բնույթ:

Հոդված 13. Ձևը և ներկայացնելու եղանակը¹

1. Գովազդը և հեռուստաշուկան պետք է, որպես այդպիսին, հստակ տարբերակելի լինեն, ինչպես նաև տեսաշարային և (կամ) ձայնային միջոցներով ակնհայտորեն տարանջատվեն ծրագրի մյուս բաղադրիչներից: Գովազդը և հեռուստաշուկան, որպես կանոն, հեռարձակվում են բլոկներով:
2. Գովազդում և հեռուստաշուկայում չպետք է կիրառվեն ենթագիտակցության վրա ազդող միջոցներ:
3. Արգելվում են թաքնված գովազդն ու հեռուստաշուկան, մասնավորապես՝ հաղորդումներում գովազդային նպատակներով ապրանքներ կամ ծառայություններ ներկայացնելը:
4. Գովազդում և հեռուստաշուկայում արգելվում է տեսաձայնային ձևով օգտագործել լրատվական և ընթացիկ իրադարձությունների վերաբերյալ պարբերաբար հաղորդումներ վարող անձանց կերպարները:

Հոդված 14. Գովազդ և հեռուստաշուկա տեղադրելը¹

1. Գովազդը և հեռուստաշուկան տեղադրվում են հաղորդումների միջև: Սույն հոդվածի 2-5-րդ պարբերություններով նախատեսված պայմանները պահպանելու պարագայում, գովազդային ընդհատումներն ու հեռուստաշուկայով ընդհատումները կարող են տեղադրվել նաև հաղորդումների ընթացքում՝ այնպես, որ դրանից չտուժեն ծրագրի ամբողջականությունը և արժեքը, ինչպես նաև չխախտվեն իրավատերերի իրավունքները:
2. Ինքնուրույն մասերից բաղկացած հաղորդումներում կամ սպորտային հաղորդումներում ու համանման կառուցվածք ունեցող՝ ընդմիջումներով հեռարձակվող իրադարձություններում և ներկայացումներում գովազդային ընդհատումներն ու

¹ Տեքստը փոփոխվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

հեռուստաշուկայով ընդհատումները պետք է տեղադրվեն միայն այդ մասերի միջև ընկած ժամանակահատվածում կամ ընդմիջումների ընթացքում:

3. Տեսալսողական այնպիսի ստեղծագործությունների հեռարձակումը, ինչպիսիք են, օրինակ, գեղարվեստական ֆիլմերը և հեռուստատեսային ֆիլմերը (բացառությամբ բազմասերիանոց ֆիլմերի, սերիալների, թեթև զվարճալի հաղորդումների և վավերագրական ֆիլմերի), որոնց թողարկման տևողությունը գերազանցում է քառասունհինգ րոպեն, կարող է ընդհատվել մեկ անգամ՝ յուրաքանչյուր քառասունհինգ րոպեն լրանալուն պես: Հետագա ընդհատումը թույլատրվում է, եթե դրանց թողարկման տևողությունն առնվազն քսան րոպեով գերազանցում է երկու կամ ավելի քառասունհինգ րոպե տևողությամբ ամբողջական ժամանակահատվածները:
4. Եթե 2-րդ պարբերությամբ նախատեսված հաղորդումներից բացի այլ հաղորդումներն ընդհատվում են գովազդով կամ հեռուստաշուկայով, հաղորդման ընթացքում յուրաքանչյուր հերթական գովազդից կամ հեռուստաշուկայից հետո պետք է անցնի առնվազն քսան րոպե:
5. Կրոնական ծիսակատարությունների հեռարձակումը չպետք է ընդհատվի գովազդով և հեռուստաշուկայով: Նորությունները և ընթացիկ իրադարձություններին առնչվող հաղորդումները, վավերագրական ֆիլմերը, կրոնական և մանկական հաղորդումները, եթե դրանց թողարկման տևողությունը երեսուն րոպեից պակաս է, չպետք է ընդհատվեն գովազդով կամ հեռուստաշուկայով: Եթե դրանց թողարկման տևողությունը երեսուն րոպե կամ ավելի է, կիրառվում են նախորդ պարբերությունների դրույթները:

Հոդված 15. Ապրանքների առանձին տեսակների գովազդն ու հեռուստաշուկայով առաջարկը²

1. Արգելվում է ծխախոտի արտադրանքի գովազդն ու հեռուստաշուկայով առաջարկը:
2. Բոլոր տեսակի ակոհոլային խմիչքների գովազդը և հեռուստաշուկայով առաջարկը պետք է համապատասխանեն հետևյալ կանոններին՝
 - ա. դրանք չպետք է հատուկ հասցեագրվեն անչափահասներին, և գովազդում ու հեռուստաշուկայում ակոհոլային խմիչքի սպառման հետ առնչություն ունեցող որևէ մեկը չպետք է անչափահասի տպավորություն թողնի.
 - բ. դրանցում ակոհոլի սպառումը չպետք է կապվի ֆիզիկական աշխատանքի կամ ավտոմեքենա վարելու հետ.
 - գ. դրանք չպետք է պարունակեն պնդում այն մասին, որ ակոհոլն օժտված է բուժական հատկություններով կամ որ այն խթանող, հանգստացնող կամ անձնական խնդիրներին լուծում տվող միջոց է.
 - դ. դրանցում չպետք է խրախուսվի ակոհոլի լայն օգտագործումը կամ բացասական գնահատական տրվի չօգտագործմանը կամ չափավոր օգտագործմանը.
 - ե. դրանցում շեշտն անհարկի կերպով չպետք է դրվի խմիչքներում ակոհոլի պարունակության վրա:
3. Արգելվում է այն դեղերի և բուժական մեթոդների գովազդը, որոնց կիրառումը հեռարձակող Մասնակցի տարածքում պահանջում է բժշկի հատուկ նշանակում:

² Վերնագիրը փոփոխվել է Արձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

4. Բոլոր այլ դեղերի և բուժական մեթոդների գովազդը պետք է, որպես այդպիսին, լինի հստակ տարբերակելի, ազնիվ, հավաստի ու վերստուգելի, ինչպես նաև համապատասխանի անձին վնասից պաշտպանելու պահանջին:
5. Արգելվում է դեղերի և բուժական մեթոդների հեռուստաշուկայով առաջարկը:

Հոդված 16. Կոնկրետ մեկ Մասնակցի հասցեագրված գովազդը և հեռուստաշուկան¹

1. Մրցակցության խաթարումից և Մասնակցի հեռուստատեսային համակարգը վտանգելուց խուսափելու նպատակով՝ գովազդը և հեռուստաշուկան, որոնք հատուկ և որոշակի հաճախականությամբ հասցեագրվում են հեռարձակող Մասնակցից բացի մեկ այլ Մասնակցի լսարանին, չպետք է խախտեն տվյալ Մասնակցի՝ հեռուստագովազդին և հեռուստաշուկային առնչվող կանոնները:
2. Նախորդ պարբերության դրույթները չեն կիրառվում, եթե՝
 - ա. համապատասխան կանոններով խտրականություն է դրվում այդ Մասնակցի իրավագործության ներքո գտնվող հեռարձակողի կողմից հեռարձակվող գովազդի ու հեռուստաշուկայի և մեկ այլ Մասնակցի իրավագործության ներքո գտնվող հեռարձակողի կամ ցանկացած այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից հեռարձակվող գովազդի և հեռուստաշուկայի միջև կամ
 - բ. համապատասխան Մասնակցներն այդ ոլորտում կնքել են երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր:

ԳԼՈՒԽ IV. ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 17. Ընդհանուր չափանիշները

1. Եթե իրականացվում է հաղորդման կամ հաղորդաշարի ամբողջական կամ մասնակի հովանավորություն, դրա մասին պետք է հստակ և հավուր պատշաճի նշվի հաղորդման սկզբում և (կամ) վերջում:
2. Հովանավորը ոչ մի պարագայում չի կարող միջամտել իր կողմից հովանավորվող հաղորդումների բովանդակությանը և դրանց թողարկման գործընթացին՝ այնպես, որ հաղորդումների մասով ներգործի հեռարձակողի պատասխանատվության և խմբագրական անկախության վրա:
3. Հովանավորվող հաղորդումները չպետք է խրախուսեն հովանավորի կամ երրորդ անձի ապրանքների կամ ծառայությունների վաճառքը, գնումը կամ վարձակալությունը, մասնավորապես՝ նմանատիպ հաղորդումներում գովազդային նպատակներով հատուկ հիշատակելով այդ ապրանքները կամ ծառայությունները:

Հոդված 18. Արգելված հովանավորությունը¹

1. Հաղորդումները չեն կարող հովանավորվել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից, որոնց հիմնական գործունեությունն այնպիսի ապրանքների արտադրությունը կամ վաճառքն է կամ ծառայությունների մատուցումը, որոնց գովազդն ու հեռուստաշուկայով առաջարկն արգելվում է 15-րդ հոդվածի ուժով:

¹ Տեքստը փոփոխվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

2. Այն ընկերությունները, որոնք, ի թիվս այլ գործունեության, զբաղվում են դեղերի և բուժական մեթոդների վաճառքով ու արտադրությամբ, կարող են հաղորդումներ հովանավորել՝ գովազդելով ընկերության անվանումը, ապրանքային նշանը, իմիջը կամ գործունեությունը, սակայն բացառելով ցանկացած հղում այն դեղերին կամ հատուկ բուժական մեթոդներին, որոնց կիրառումը հեռարձակող Մասնակցի տարածքում պահանջում է բժշկի հատուկ նշանակում:
3. Լրատվական և ընթացիկ իրադարձությունների վերաբերյալ հաղորդումների հովանավորությունն արգելվում է:

ԳԼՈՒԽ IV¹. ԲԱՑԱՈՒՊԵՍ ԻՆՔՆԱԳՈՎԱԶՊԻՆ ԿԱՄ ՀԵՌՈՒՍԱՇՈՒԿԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՕՐԱԳՐԵՐԸ²

Հոդված 18¹. Բացառապես ինքնագովազդին վերաբերող ծրագրերը

- 1 Սույն Կոնվենցիայի դրույթները, համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*), կիրառվում են բացառապես ինքնագովազդին վերաբերող ծրագրերի նկատմամբ:
- 2 Նման ծրագրերում գովազդի մյուս ձևերը թույլատրվում են՝ 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված սահմանափակումների պահպանմամբ:

Հոդված 18². Բացառապես հեռուստաշուկային վերաբերող ծրագրերը

- 1 Սույն Կոնվենցիայի դրույթները, համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*), կիրառվում են բացառապես հեռուստաշուկային վերաբերող ծրագրերի նկատմամբ:
- 2 Նման ծրագրերում գովազդի նկատմամբ կիրառվում են 12-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված սահմանափակումները: 12-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը չի կիրառվում:

ԳԼՈՒԽ V. ՓՈՒՍԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 19. Կողմերի միջև համագործակցությունը

- 1 Սույն Կոնվենցիայի իրականացման նպատակով Կողմերը պարտավորվում են միմյանց փոխադարձ օգնություն ցուցաբերել:
- 2 Այդ նպատակով՝
 - ա) յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն նշանակում է մեկ կամ ավելի մարմիններ, որոնցից յուրաքանչյուրի անվանումն ու հասցեն հաղորդում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին՝ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնելիս.
 - բ) յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն, որը նշանակել է մեկից ավելի մարմին, «ա» ենթապարբերության համաձայն ներկայացվող իր հաղորդման մեջ նշում է յուրաքանչյուր մարմնի իրավասությունները:

² Գլուխը լրացվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

3 Մասնակցի կողմից նշանակված մարմինը՝

- ա) տրամադրում է սույն Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 2–րդ պարբերությամբ նախատեսված տեղեկությունները.
- բ) տրամադրում է, այլ Մասնակցի կողմից նշանակված մարմնի հարցման դեպքում, տեղեկություններ սույն Կոնվենցիայով կարգավորվող ոլորտներին վերաբերող ներպետական իրավունքի և գործելակերպի մասին.
- գ) հարկ եղած դեպքում համագործակցում է մյուս Մասնակիցների կողմից նշանակված մարմինների հետ, մասնավորապես, երբ դա կարող է խթանել սույն Կոնվենցիայի իրականացման համար ձեռնարկվող միջոցների արդյունավետությունը.
- դ) ուսումնասիրում է սույն Կոնվենցիայի կիրառումից բխող ցանկացած խնդիր, որն իր ուշադրությանն է ներկայացվում այլ Մասնակցի նշանակված մարմնի կողմից:

ԳԼՈՒԽ VI. ՄՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ

Հոդված 20. Մշտական կոմիտեն¹

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով ստեղծվում է Մշտական կոմիտե:
2. Յուրաքանչյուր Մասնակից մշտական կոմիտեում կարող է ներկայացված լինել մեկ կամ ավելի պատվիրակի միջոցով: Յուրաքանչյուր պատվիրակություն ունի մեկ ձայնի իրավունք: Իր իրավասության շրջանակներում Եվրոպական համայնքն օգտվում է սույն Կոնվենցիայի Մասնակից՝ իր անդամ պետությունների թվին հավասար ձայներով քվեարկելու իրավունքից: Եվրոպական համայնքը չի օգտվում իր ձայնի իրավունքից այն դեպքերում, երբ համապատասխան անդամ պետություններն օգտվում են իրենց ձայնի իրավունքից, և հակառակը:
3. 29–րդ հոդվածի 1–ին պարբերությունում նշված ցանկացած պետություն, որը սույն Կոնվենցիայի Մասնակից չէ, Մշտական կոմիտեում կարող է ներկայացված լինել դիտորդի միջոցով:
4. Մշտական կոմիտեն իր գործառնություններն իրականացնելու նպատակով կարող է հայցել փորձագետների խորհրդատվությունը: Այն կարող է, իր նախաձեռնությամբ կամ համապատասխան սուբյեկտի դիմումի հիման վրա, հրավիրել սույն Կոնվենցիայով կարգավորվող ոլորտներում տեխնիկական որակավորում ունեցող ցանկացած միջազգային կամ տեղական, կառավարական կամ ոչ կառավարական մարմնի՝ որպես դիտորդ ներկա գտնվելու իր նիստերից մեկին կամ դրա մի մասին:
5. Մշտական կոմիտեի նիստը հրավիրում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը: Դրա առաջին նիստն անցկացվում է սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում: Այնուհետև այն նիստ է գումարում Մասնակիցների մեկ երրորդի կամ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի պահանջով կամ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի նախաձեռնությամբ՝ 23–րդ հոդվածի 2–րդ պարբերության դրույթներին համապատասխան, կամ մեկ կամ ավելի Մասնակիցների պահանջով՝ 21–րդ հոդվածի «գ» ենթապարբերության և 25–րդ հոդվածի 2–րդ պարբերության դրույթներին համապատասխան:

¹ Տեքստը փոփոխվել է Մրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

6. Մշտական կոմիտեի նիստ անցկացնելու համար քվորումն ապահովվում է Մասնակիցների մեծամասնությամբ:
7. 9¹ հոդվածի 3«բ» պարբերության և 23-րդ հոդվածի 3-րդ պարբերության դրույթների պահպանմամբ՝ Մշտական կոմիտեի որոշումները կայացվում են ներկա գտնվող անդամների երեք քառորդ մեծամասնությամբ:
8. Սույն Կոնվենցիայի դրույթների պահպանմամբ՝ Մշտական կոմիտեն մշակում է իր ընթացակարգային կանոնները:

Հոդված 21. Մշտական կոմիտեի գործառույթները¹

- 1 Մշտական կոմիտեն պատասխանատու է սույն Կոնվենցիայի կիրառմանը հետևելու համար: Այն կարող է՝
 - ա. Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Մասնակիցներին.
 - բ. Կոնվենցիայում անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել և ուսումնասիրել 23-րդ հոդվածի դրույթներին համապատասխան առաջարկվող փոփոխությունները.
 - գ. մեկ կամ ավելի Մասնակիցների դիմումի հիման վրա ուսումնասիրել Կոնվենցիայի մեկնաբանմանը վերաբերող հարցեր.
 - դ. առավելագույն ջանքեր գործադրել՝ ապահովելու 25-րդ հոդվածի դրույթներին համապատասխան իրեն հասցեագրված ցանկացած խնդրի բարեկամական կարգավորումը.
 - ե. Նախարարների կոմիտեին առաջարկություններ ներկայացնել 29-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պետություններից բացի այլ պետությունների սույն Կոնվենցիային միանալու հրավեր ներկայացնելու մասին.
 - զ. 24¹ հոդվածի 2«գ» պարբերության համաձայն եզրակացություն տալ իրավունքների չարաշահման վերաբերյալ:
- 2 Ի լրումն, Մշտական կոմիտեն՝
 - ա) կազմում է 9¹ հոդվածի 3«բ» պարբերությունում նշված ուղեցույցները՝ հասարակության համար առանձնակի կարևորության իրադարձությունների հանրամատչելիությանը վերաբերող՝ սույն Կոնվենցիայի կանոնների և Եվրոպական համայնքի համապատասխան դրույթների կիրառման միջև տարբերություններից խուսափելու նպատակով.
 - բ) կարծիք հայտնել այն Մասնակիցների կողմից ձեռնարկվող միջոցների վերաբերյալ, որոնք 9¹ հոդվածի 2-րդ պարբերությանը համապատասխան կազմել են տվյալ երկրում և դրանից դուրս կատարվող՝ իրենց կարծիքով հասարակության համար առանձնակի կարևորության իրադարձությունների ցանկ.

¹ Տեքստը փոփոխվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

- զ) տարեկան մեկ անգամ հրապարակել ցուցակներում ներառված իրադարձությունների և Մասնակիցների կողմից 9¹ հոդվածի 2«ե» պարբերությանը համաձայն ծանուցված համապատասխան միջոցների համախմբված ցանկը:

Հոդված 22. Մշտական կոմիտեի զեկույցները

Յուրաքանչյուր նիստից հետո Մշտական կոմիտեն Մասնակիցներին և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեին զեկույց է ուղարկում իր քննարկումների և ընդունված բոլոր որոշումների մասին:

ԳԼՈՒԽ VII. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 23. Փոփոխությունները¹

1. Ցանկացած Մասնակից կարող է սույն Կոնվենցիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկ ներկայացնել:
2. Կոնվենցիայում փոփոխություն կատարելու վերաբերյալ ցանկացած առաջարկի մասին պետք է ծանուցվի Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին, որն էլ այդ մասին տեղեկացնում է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, Եվրոպական մշակութային կոնվենցիայի մասնակից այլ պետություններին, Եվրոպական համայնքին և անդամ չհանդիսացող՝ սույն Կոնվենցիային միացած կամ 30-րդ հոդվածի դրույթներին համապատասխան միանալու հրավեր ստացած պետություններին: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը Մշտական կոմիտեի նիստ է հրավիրում նշված առաջարկի մասին հաղորդում ստանալուց նվազագույնը երկու ամիս հետո:
3. Մշտական կոմիտեն ուսումնասիրում է առաջարկվող ցանկացած փոփոխություն և իր անդամների երեք քառորդ մեծամասնության որոշմամբ ընդունված տեքստը ներկայացնում Նախարարների կոմիտեի հաստատմանը: Հաստատվելուց հետո տեքստն ուղարկվում է Մասնակիցներին՝ այն ընդունելու նպատակով:
4. Ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում դրա ընդունման մասին բոլոր Մասնակիցների կողմից Գլխավոր քարտուղարին տեղեկացնելուց հետո երեսուներորդ օրը:
5. Այդուհանդերձ, Նախարարների կոմիտեն, Մշտական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո, կարող է որոշել, որ կոնկրետ փոփոխությունն ուժի մեջ է մտնում այն ընդունելու համար բաց լինելու ամսաթվից հետո երկամյա ժամկետի ավարտին, եթե Մասնակիցը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին չի ծանուցել այն ուժի մեջ մտնելու վերաբերյալ առարկության մասին: Նման առարկության մասին ծանուցելու դեպքում, փոփոխությունն ուժի մեջ է մտնում առարկության մասին ծանուցած՝ Կոնվենցիայի Մասնակցի կողմից ընդունման մասին փաստաթուղթը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու ամսաթվին հաջորդող ամսվա առաջին օրը:
6. Եթե փոփոխությունը հաստատվել է Նախարարների կոմիտեի կողմից, սակայն դեռևս ուժի մեջ չի մտել 4-րդ և 5-րդ պարբերություններին համապատասխան, պետությունը կամ Եվրոպական համայնքը չի կարող Կոնվենցիայով պարտավորված լինելու վերաբերյալ համաձայնություն հայտնել, եթե միաժամանակ չի ընդունում փոփոխությունը:

¹ Տեքստը փոփոխվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

ԳԼՈՒԽ VIII. ՍՈՒՅՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 24. Սույն Կոնվենցիայի ենթադրյալ խախտումները

1. Երբ Մասնակիցը սույն Կոնվենցիայի խախտում է արձանագրում, այն ենթադրյալ խախտման մասին հաղորդում է հեռարձակող Մասնակցին, և երկու Մասնակիցները միջոցներ են ձեռնարկում՝ խնդիրները 19-րդ, 25-րդ և 26-րդ հոդվածների դրույթների հիման վրա հաղթահարելու ուղղությամբ:
2. Եթե ենթադրյալ խախտումն ակնհայտ, լուրջ և կոպիտ է, որը հանրային էական խնդիրներ է առաջացնում և վերաբերում է 7-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ պարբերություններին, 12-րդ հոդվածին, 13-րդ հոդվածի 1-ին պարբերության առաջին նախադասությանը, 14-րդ հոդվածին կամ 15-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ պարբերություններին, և եթե հաղորդումից հետո երկու շաբաթվա ընթացքում խախտումը շարունակվում է, ընդունող Մասնակիցը կարող է ժամանակավորապես կասեցնել այն ծրագրի վերահեռարձակումը, որին վերագրվում է խախտումը:
3. Ենթադրյալ խախտման մյուս բոլոր դեպքերում, բացառությամբ 4-րդ պարբերությամբ նախատեսվածներից, ընդունող Մասնակիցը կարող է խախտման մասին տեղեկանալուց հետո ութ ամիս ժամկետով ժամանակավորապես կասեցնել այն ծրագրի վերահեռարձակումը, որին վերագրվում է խախտումը, եթե ենթադրյալ խախտումը շարունակվում է:
4. Վերահեռարձակման ժամանակավոր կասեցումն արգելվում է 7-րդ հոդվածի 3-րդ պարբերության, 8-րդ, 9-րդ կամ 10-րդ հոդվածների ենթադրյալ խախտումների դեպքում:

Հոդված 24¹. Սույն Կոնվենցիայով վերապահվող իրավունքների ենթադրյալ չարաշահումները¹

1. Երբ հեռարձակողի ծրագրերն ամբողջությամբ կամ հիմնականում ուղղված են որևէ Մասնակցի տարածք, որի իրավագործությունը չի տարածվում հեռարձակողի վրա (ընդունող Մասնակից), և եթե հեռարձակողն այդ Մասնակցի տարածքում գործունեություն է իրականացնում Կոնվենցիայով կարգավորվող ոլորտներին առնչվող այն իրավական ակտերի գործողությունից խուսափելու նպատակով, որոնք կկիրառվեն իր նկատմամբ, եթե հեռարձակողը գտնվեր այդ մյուս Մասնակցի իրավագործության ներքո, ապա դա համարվում է իրավունքների չարաշահում:
2. Եթե որևէ Մասնակից հայտարարում է նման չարաշահման մասին, ապա կիրառվում է հետևյալ ընթացակարգը՝
 - ա. համապատասխան Մասնակիցները միջոցներ են ձեռնարկում բարեկամական կարգավորման հասնելու համար.
 - բ. եռամսյա ժամկետում բարեկամական կարգավորման չհասնելու դեպքում ընդունող Մասնակիցը հարցը հասցեագրում է Մշտական կոմիտեին.
 - գ. համապատասխան Մասնակիցների կարծիքները լսելուց հետո Մշտական կոմիտեն, հարցն իրեն հասցեագրելու ամսաթվից հետո վեցամսյա ժամկետում, եզրակացություն է տալիս այն մասին, թե արդյոք

¹ Գլուխը լրացվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

կատարվել է իրավունքների չարաշահում, և այդ մասին տեղեկացնում է շահագրգիռ Մասնակիցներին:

3. Եթե Մշտական կոմիտեն եզրակացնում է, որ տեղի է ունեցել իրավունքների չարաշահում, ապա այն Մասնակիցը, որի իրավագործության ներքո գտնվող է համարվում հեռարձակողը, անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ վերացնելու իրավունքների չարաշահումը և դրանց մասին տեղեկացնում է Մշտական կոմիտեին:
4. Եթե Մասնակիցը, որի իրավագործության ներքո գտնվող է համարվում տվյալ հեռարձակողը, վեցամսյա ժամկետում չի ձեռնարկում 3-րդ պարբերությունում նշված միջոցները, համապատասխան Մասնակիցները կիրառում են Կոնվենցիայի 26-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ և հավելվածով սահմանված արբիտրաժային վարույթը:
5. Նախքան արբիտրաժային վարույթի ավարտը՝ ընդունող Մասնակիցը չպետք է միջոցներ ձեռնարկի տվյալ ծրագրի նկատմամբ:
6. Սույն հոդվածի համաձայն առաջարկվող կամ ձեռնարկվող ցանկացած միջոց պետք է համապատասխանի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածին:

ԳԼՈՒԽ IX. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 25. Հաշտեցումը

1. Սույն Կոնվենցիայի կիրառումից բխող խնդիրների դեպքում տվյալ վեճի կողմերը պետք է միջոցներ ձեռնարկեն բարեկամական կարգավորման հասնելու համար:
2. Եթե համապատասխան կողմերից որևէ մեկը չի առարկում, Մշտական կոմիտեն, որին կողմերը կարող են ցանկացած պահի դիմել, կարող է ուսումնասիրել հարցը՝ հնարավորինս արագ դրան բավարար լուծում տալու և, հարկ եղած դեպքում, հարցի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն կազմելու նպատակով:
3. Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է Մշտական կոմիտեին անհապաղ փոխանցել այն բոլոր տեղեկություններն ու միջոցները, որոնք անհրաժեշտ են վերջինիս՝ նախորդ պարբերությամբ նախատեսված գործառնություններն իրականացնելու համար:

Հոդված 26. Արբիտրաժը

1. Եթե կողմերը չեն կարողանում վեճը կարգավորել 25-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, նրանք կարող են ընդհանուր համաձայնությամբ այն ներկայացնել արբիտրաժ, որի ընթացակարգը նախատեսված է սույն Կոնվենցիայի հավելվածում: Հաշտեցման վարույթ սկսելու մասին առաջին դիմումը ներկայացնելուց հետո վեցամսյա ժամկետում նման համաձայնության չհանգելու դեպքում, համապատասխան կողմերից մեկի պահանջով վեճը կարող է ներկայացվել արբիտրաժ:
2. Յուրաքանչյուր Մասնակից կարող է ցանկացած ժամանակ հայտարարել, որ սույն Կոնվենցիայի հավելվածով նախատեսված արբիտրաժային վարույթի կիրառումը պարտադիր է համարում՝ փաստի ուժով (*ipso facto*) և առանց նույն պարտավորությունը ստանձնող որևէ այլ Մասնակցի մասով հատուկ համաձայնության:

ԳԼՈՒԽ X. ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հոդված 27. Այլ միջազգային համաձայնագրերը կամ պայմանավորվածությունները¹

1. Իրենց փոխհարաբերություններում Մասնակիցները, որոնք Եվրոպական համայնքի անդամ պետություններ են, կիրառում են Համայնքի կանոնները և, հետևաբար, չեն կիրառում սույն Կոնվենցիայից բխող կանոններն այնքանով, որքանով գոյություն ունի տվյալ հարցը կարգավորող Համայնքի կանոն:
2. Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի խոչընդոտում Մասնակիցների կողմից Կոնվենցիայի դրույթները լրացնող կամ մշակող կամ դրանց կիրառման ոլորտն ընդլայնող միջազգային համաձայնագրեր կնքելը:
3. Երկկողմանի համաձայնագրերի մասով սույն Կոնվենցիան չի փոփոխում Մասնակիցների այն իրավունքներն ու պարտավորությունները, որոնք բխում են նման համաձայնագրերից և չեն շոշափում սույն Կոնվենցիայով նախատեսված՝ այլ Մասնակիցների իրավունքների իրականացումը կամ պարտավորությունների կատարումը:

Հոդված 28. Կոնվենցիայի առնչությունը Մասնակիցների ներպետական իրավունքին¹

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի խոչընդոտում Մասնակիցների կողմից՝ 5-րդ հոդվածի իմաստով իրենց իրավագրության տակ գտնվող հեռարձակողի կողմից հեռարձակվող ծրագրերի նկատմամբ սույն Կոնվենցիայով նախատեսված կանոններից առավել խիստ կամ մանրամասն կանոններ կիրառելը:

ԳԼՈՒԽ XI. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 29. Ստորագրումը և ուժի մեջ մտնելը¹

1. Սույն Կոնվենցիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և Եվրոպական մշակութային կոնվենցիայի մասնակից այլ պետությունների, ինչպես նաև Եվրոպական համայնքի կողմից ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:
2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն ամսաթվից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ յոթ պետություններ, որոնցից առնվազն հինգը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ են, նախորդ պարբերության դրույթների համաձայն հայտնել են Կոնվենցիայով պարտավորված լինելու վերաբերյալ իրենց համաձայնությունը:
3. Պետությունը կարող է, ստորագրման պահին կամ սույն Կոնվենցիան այդ պետության համար ուժի մեջ մտնելուց առաջ ցանկացած ժամանակ, հայտարարել, որ ժամանակավորապես կկիրառի Կոնվենցիան:
4. 1-ին պարբերությունում նշված որևէ պետության կամ Եվրոպական համայնքի համար, որը հետագայում հայտնում է սույն Կոնվենցիայով պարտավորված լինելու իր համաձայնությունը, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ

¹ Տեքստը փոփոխվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 30. Անդամ չհանդիսացող պետությունների միանալը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն կարող է, Պայմանավորվող պետությունների հետ խորհրդակցելուց հետո, հրավիրել ցանկացած այլ պետության՝ միանալու սույն Կոնվենցիային՝ Եվրոպայի խորհրդի կանոնադրության 20«դ» հոդվածով նախատեսված մեծամասնությամբ ընդունված որոշմամբ և Կոմիտեի աշխատանքներին մասնակցելու իրավունք ունեցող Պայմանավորվող պետությունների ներկայացուցիչների միաձայն քվեով:
2. Կոնվենցիային միացող ցանկացած պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 31. Տարածքային կիրառությունը

1. Ցանկացած պետություն կարող է, ստորագրման ժամանակ կամ իր վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս, նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան:
2. Ցանկացած պետություն կարող է, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ավելի ուշ ուղղված հայտարարությամբ, սույն Կոնվենցիայի կիրառումը տարածել այդ հայտարարության մեջ նշված ցանկացած այլ տարածքի վրա: Նման տարածքի համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից այդ հայտարարությունն ստանալու օրվանից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:
3. Նախորդ երկու պարբերությունների համաձայն արված ցանկացած հայտարարություն կարելի է, Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով, հետ վերցնել՝ նման հայտարարությունում նշված ցանկացած տարածքի մասով: Հայտարարությունը հետ վերցնելն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից այդ ծանուցումն ստանալու օրվանից հետո վեցամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 32. Վերապահումներ¹

1. Ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս ցանկացած պետություն կարող է հայտարարել, որ իրեն իրավունք է վերապահում սահմանափակելու ակտիվային խմիչքների՝ սույն Կոնվենցիայի 15–րդ հոդվածի 2–րդ պարբերությամբ նախատեսված կանոններին համապատասխանող գովազդ պարունակող ծրագրերի վերահեռարձակումն իր տարածքում՝ միայն այնքանով, որքանով դա չի համապատասխանում իր ներպետական օրենսդրությանը:

Այլ վերապահումներ չեն կարող կատարվել:

2. Նախորդ պարբերությանը համապատասխան կատարված վերապահումը ենթակա չէ առարկության:

¹ Տեքստը փոփոխվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

3. 1-ին պարբերության համաձայն վերապահում կատարած ցանկացած Պայմանավորվող պետություն կարող է, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով, ամբողջությամբ կամ մասնակիորեն հանել այն: Վերապահումը հանելն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից այդ ծանուցումն ստանալու ամսաթվին:
4. 1-ին պարբերության համաձայն վերապահում կատարած Մասնակիցը չի կարող պահանջել համապատասխան դրույթի կիրառումն այլ Մասնակցի կողմից, այդուհանդերձ, եթե վերապահումը մասնակի կամ պայմանական է, Մասնակիցը կարող է պահանջել այդ դրույթի կիրառումն այնքանով, որքանով որ նա ընդունել է այդ դրույթը:

Հոդված 33. Չեղյալ հայտարարելը

1. Ցանկացած Մասնակից ցանկացած ժամանակ կարող է, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով, չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան:
2. Կոնվենցիան չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումն ստանալու օրվանից հետո վեցամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 34. Ծանուցումները¹

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, Եվրոպական մշակութային կոնվենցիայի մասնակից մյուս պետություններին, Եվրոպական համայնքին և Կոնվենցիային միացած կամ միանալու հրավեր ստացած ցանկացած Պետության տեղեկացնում է՝

- ա) սույն Կոնվենցիան ստորագրելու ցանկացած դեպքի,
- բ) վավերացման, հաստատման, ընդունման կամ միանալու մասին որևէ փաստաթուղթ ի պահ հանձնելու,
- գ) 29-րդ, 30-րդ և 31-րդ հոդվածների դրույթներին համապատասխան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ցանկացած ամսաթվի,
- դ) 22-րդ հոդվածի դրույթներին համապատասխան պատրաստված ցանկացած զեկույցի,
- ե) սույն Կոնվենցիային առնչվող ցանկացած այլ գործողության, հայտարարության, ծանուցման կամ հաղորդման մասին:

Ի հաստատումն որի, ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Ստրասբուրգում, 1989 թվականի մայիսի 5-ին, երկու հավասարազոր՝ անգլերեն և ֆրանսերեն տեքստերով, մեկ օրինակով, որն ի պահ է հանձնվում Եվրոպայի խորհրդի արխիվ:

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները փոխանցում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետությանը, Եվրոպական մշակութային կոնվենցիայի մասնակից մյուս պետություններին, Եվրոպական համայնքին և սույն Կոնվենցիային միանալու հրավեր ստացած ցանկացած պետության:¹

¹ Տեքստը փոփոխվել է Սրձանագրության (ԵՊՇ N 171) դրույթներին համապատասխան:

ՀԱՎԵԼՎԱԾ

Արբիտրաժը

1. Արբիտրաժի պահանջի մասին ծանուցվում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը: Ծանուցումը պետք է ներառի վեճի մյուս կողմի անվանումը և վեճի առարկան: Գլխավոր քարտուղարն այդպեղև ստացված տեղեկությունները փոխանցում է Կոնվենցիայի բոլոր Մասնակիցներին:
2. Երկու Մասնակցի միջև վեճի դեպքում, որոնցից մեկը Եվրոպական համայնքի անդամ պետություն է՝ այն դեպքում, երբ Եվրոպական համայնքը սույն Կոնվենցիայի Մասնակից է, արբիտրաժի մասին պահանջը հասցեագրվում է ինչպես այդ անդամ պետությանը, այնպես էլ Համայնքին, որոնք, պահանջը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում, համատեղ ծանուցում են Գլխավոր քարտուղարին՝ որպես վեճի կողմ իրենցից մեկի կամ համատեղ հանդես գալու մասին: Նշված ժամկետում նման ծանուցում չներկայացնելու դեպքում, անդամ պետությունն ու Համայնքը, արբիտրաժային տրիբունալի կազմը և ընթացակարգը կարգավորող դրույթների կիրառման նպատակով, համարվում են վեճի մեկ և միևնույն կողմ: Նույնը վերաբերում է նաև այն դեպքին, երբ անդամ պետությունն ու Համայնքը համատեղ ներկայանում են որպես վեճի կողմ: Ստորև նշված 4–րդ պարբերության առաջին նախադասությամբ նախատեսված մեկամսյա ժամկետը սույն պարբերությամբ նախատեսված դեպքերում երկարաձգվում է մինչև երկու ամիս:
3. Արբիտրաժային տրիբունալը պետք է կազմված լինի երեք անդամից. կողմերից յուրաքանչյուրը նշանակում է մեկ արբիտր: Նման եղանակով նշանակված երկու արբիտրները, ընդհանուր համաձայնությամբ, նշանակում են երրորդ արբիտրին, որը տրիբունալի նախագահն է: Վերջինս չպետք է լինի վեճի կողմերից որևէ մեկի քաղաքացի, նրա բնակության վայրը չպետք է գտնվի այդ կողմերից որևէ մեկի տարածքում, նա չպետք է աշխատի դրանցից որևէ մեկի համար, ինչպես նաև չպետք է որևէ այլ կարգավիճակով երբևէ ներգրավված լինի տվյալ գործում:
4. Եթե Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի դիմումն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում կողմերից մեկն արբիտր չի նշանակում, ապա հաջորդող մեկամսյա ժամկետում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահը, մյուս կողմի դիմումի հիման վրա, նշանակում է արբիտր: Եթե Դատարանի նախագահը չի կարող դա անել կամ վեճի կողմերից մեկի քաղաքացի է, արբիտրի նշանակումը կատարվում է Դատարանի փոխնախագահի կամ ամենատարեց դատավորի կողմից, որը վեճի կողմերից որևէ մեկի քաղաքացի չէ: Նույն ընթացակարգը կիրառվում է, եթե երկրորդ արբիտրի նշանակումից հետո մեկամսյա ժամկետում չի նշանակվում արբիտրաժային տրիբունալի նախագահը:
5. 3–րդ և 4–րդ պարբերությունների դրույթները, համապատասխան դեպքերում, կիրառվում են՝ ցանկացած թափուր պաշտոն համալրելու համար:
6. Երկու կամ ավելի կողմեր, որոնք համաձայնության են գալիս միևնույն շահերը հետապնդելու շուրջ, արբիտր են նշանակում համատեղ:
7. Վեճի կողմերը և Մշտական կոմիտեն արբիտրաժային տրիբունալին տրամադրում են վարույթի արդյունավետ անցկացման համար անհրաժեշտ բոլոր միջոցները:
8. Արբիտրաժային տրիբունալը մշակում է իր ընթացակարգային կանոնները: Դրա որոշումները կայացվում են անդամների մեծամասնության քվեով: Տրիբունալի վճիռը վերջնական է և պարտադիր:

9. Արբիտրաժային տրիբունալի վճռի մասին ծանուցվում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը, որը դրա մասին հաղորդում է սույն Կոնվենցիայի բոլոր Մասնակիցներին:
10. Վեճի յուրաքանչյուր կողմ կրում է իր կողմից նշանակված արբիտրի հետ կապված ծախսերը: Այդ կողմերը հավասարապես կրում են երրորդ արբիտրի, ինչպես նաև արբիտրաժի հետ կապված մյուս ծախսերը: